ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՆՈՐ ԱՆԴԱՄ ՈՒՆԻ

22.09.2014 14:41

Վաղաժամկետ դադարեցվել է ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Ռուբեն Հակոբյանի լիազորությունները՝ համաձայն դիմումի: Ռուբեն Հակոբյանի դիմումի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ վերջինս մշտապես բնակվում է Վանաձոր քաղաքում և դժվարություն է ունենում մասնակցել բավականին հաճախ գումարվող Պալատի խորհրդի նիստերին:
ՀՀ փաստաբանների պալատի կանոնադրության համաձայն խորհրդի անդամի լիազորություններից հրաժարվելու դեպքում որպես ՓՊ խորհրդի անդամ է ներգրավվում առավել շատ ‘կողմ’ ձայներ ստացած փաստաբանը: Ռուբեն Հակոբյանից հետո առավել շատ ‘կողմ’ ձայներ ստացել է փաստաբան Ալեքսանդր Սերգեյի Սիրունյանը (արտոնագիր թիվ 945)՝ 241 ձայնով:
Փաստաբան Ալեքսանդր Սիրունյանը 2014թ. սեպտեմբերի 22-ից համարվում է ներգրավված ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Ռուբեն Հակոբյանի փոխարեն' վերջինիս լիազորությունների համար սահմանված ժամկետի մնացած ժամանակահատվածով:

Առաջարկվող նորություններ

21.11.2014ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է ՆՈՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՎ

07.12.2015ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է ՆՈՐ ԱՆԴԱՄՈՎ

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })